ԱՇՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԲԱՐԵԱՐԳՈՒՄ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ» ԲՀ

ՀՀ, 1101, ք.Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոցի 0
Հեռ. +374 (231) 53663 - 112

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ
ВАГАРШАПАТА
"ДИРЕКЦИЯ БАРЕКАРГУМ" БУ

РА, 1101, г. Эчмиадзин, ул. Св. М. Маштоца 0
Тел.: +374 (231) 53663 - 112

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, "BAREKARGUM DIRECTORATE" BI OF THE
MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
0 St. M. Mashtots Str.,
Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 53663 – 112

№ 103 19 Դեկտեմբեր 2026թ.

«ՇԻՆ ԼԻԴԵՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ՇԻՆ ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2026 թվականի ապրիլի 27-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 26/5-13» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Գնորդը 2026 թվականի մայիսի 18-ին ստացել է Վաճառողի գրությունն առ այն, որ Ընկերությունը խնդրում է լուծել Պայմանագիրը 93-րդ չափաբաժնի /փական/ մասով:

Ելնելով վերոգրյալից՝ Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ն, հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 27-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 26/5-13» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7 կետը, 2026 թվականի մայիսի 20-ից մասնակի միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը 93-րդ չափաբաժնի մասով:

Տեղեկացնում ենք, որ «ՇԻՆ ԼԻԴԵՐ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 /տասը/ բանկային օրվա ընթացքում Վաղարշապատի համայնքապետարանի գանձապետական «900325151109» հաշվեհամարին վճարել N «ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 26/5-13» ծածկագրով գնման պայմանագրի 93-րդ չափաբաժնի որակավորման ապահովումը՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ գումարի չափով, 93-րդ չափաբաժնի պայմանագրի ապահովումը՝ 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված տույժերը, որ կազմել է 40 /քառասուն/ ՀՀ դրամ /(80000 * 0,05% * 1 աշխատանքային օր/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:

Հարգանքներով՝

ՏՆՕՐԵՆ՝ **Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Կատ.՝ ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 26/5-13
ծածկագրով գնման ընթացակարգի համակարգող,
Գնումների բաժնի պետ՝ Շ. Պողոսյան
Հեռ.՝ +374 94 27 07 00, +374 231 5 36 63 /520/